Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն  Ե Վ  Թ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն  Կ Ե Ն Տ Ր Ո Ն

## 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

# Հ Ա Յ Ո Ց  Լ Ե Զ Ո Ւ
# Ե Վ
# Հ Ա Յ  Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԹԵՍՏ 2

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ | |

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ | |

*Սիրելի՛ աշակերտ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

*Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:*

***Յանկանում ենք հաջողություն***

**1** Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղերում է գրվում միևնույն տառը կամ տառակապակցությունը (փակագծերում նշվածներից որևէ մեկը):

1) խուսա-ել, նուր-, գրա-ար (**ք** կամ **փ**)
2) քվ-արկել, առօր-կան, վայրկ-ն (**յա** կամ **եա**)
3) օ-րան, բե-ի, մ-ահոն (**ր** կամ **րր**)
4) վա-ճան, հա-ճապակի, պանդու-տ (**ղ** կամ **խ**)

**2** Ո՞ր բառում գաղտնավանկ կա:

1) դուստր
2) սանրել
3) հանրային
4) համընթաց

**3** Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում գծիկով:

1) մանր(մունր), նետ(աղեղ), մեն(մենակ)
2) ավել(պակաս), ուրախ(զվարթ), փոխ(արքա)
3) փոքր(ինչ), կաս(կարմիր), սև(ծովյան)
4) հայ(ռուսական), առ(հավետ), մեկ(մեկ)

**4** Ո՞ր բառում ձայնավորի սղում *չկա:*

1) տամկանալ
2) կանխատեսում
3) քննական
4) մեղվաբույծ

**5** Ո՞ր բառն է հապավում:

1) երկտող
2) պարերգ
3) գաղթօջախ
4) ուսմասվար

**6** Ո՞ր բառակապակցության ընդգծված բառն է գործածված փոխաբերական իմաստով:

1) <u>**կարկաչուն**</u> առվակ
2) <u>**մութ**</u> ուժեր
3) <u>**փարթամ**</u> խոտ
4) <u>**թեժ**</u> արև

**7** Ո՞ր շարքի բոլոր բառերում վերջածանց կա:

1) անկայուն, անձրևորդ, բուրմունք
2) հյուղակ, խանութպան, շառագույն
3) ուժգին, համակրանք, կարծիք
4) կրճատ, խորանարդ, դասալիք



2011 թ. 9-րդ դասարանի ավարտական քննություն

*Պատասխանների ձևաթուղթ*
*Հայոց լեզու և Հայ գրականություն*

*Եղե՛ք ուշադիր* *Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելու համար ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրեք X նշանը (միևնույն սյունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Պատասխանի համարը

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

Պատասխանի համարը

| | 21 | 22 | 23 | 24 | 25 |
|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Փոխված պատասխանների քանակը

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

Առաջադրանքի համարը

26.
27.
28.
29.
30.
31.
32. 1 ով՝ 2 ում՝
33. ................................................

**Լրացնում է ստուգողը**

**Կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքների միավորները**

| | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

| | 32 | 33 | 34 |
|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ |
| 2 | ☐ | ☐ | ☐ |
| 3 | | ☐ | ☐ |
| 4 | | | ☐ |

Հանձնաժողովի անդամներ՝

1. ................................................
2. ................................................

Հանձնաժողովի նախագահ՝

................................................

| | |
|---|---|
| Միավորների գումարը | |
| Գնահատականը | |

**8** Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

1) ցոլալ-պսպղալ, ծանակել-ծաղրել, հորդորել-հռչակել
2) սարսափել-զարհուրել, երկմտել-տարակուսել, աղճատել-դաջել
3) իզուր-ապարդյուն, բարձիթողի-անտերունչ, դժնի-դժկամ
4) երկչոտ-վախկոտ, խոտոր-շեղ, առանձնահատուկ-ուրույն

**9** Հետևյալ բանաստեղծական հատվածներից որո՞ւմ դարձվածք *չկա:*

1) Վերհուշներս կրկին,
   Ա՜խ, ինձ այնտեղ տարան,
   Լեռնաշխարհը տարան
   Այն երկնամերձ:

2) Որ ժամին ձեր սիրտը կուզի՝
   Իմ դուռը բաց է:
   Մի նայեք, որ պատուհանիս
   Լույսը հանգած է:

3) Հոգնած ամպի մի պատառ
   Քարափի հոնքին՝
   Ծիածանի թևի տակ,
   Ավանդեց հոգին:

4) Ամեն, ամեն ինչ առան քո ձեռքից,
   Օրդ սև արին, սև արին տարիդ,
   Բայց քո տան հիմքի քարին տարեկից
   Տարիքդ խլել չկարողացան:

**10** Ո՞ր շարքի բոլոր բառերն են հավաքական գոյականներ:

1) ռհմակ, բանջարեղեն, բազմաքանակ
2) զարդեղեն, աշակերտություն, զորք
3) ամբոխ, ծառաստան, ընթրիք
4) նամականի, անձնակազմ, մանկություն

**11** Ո՞ր շարքի բոլոր բառերն են գերադրական աստիճանով դրված ածականներ:

1) հնագույն, գերկարճ, ամենախրթին
2) վեհագույն, ամենաչքնաղ, առաջնային
3) նվազագույն, մեծապատիվ, ամենախռնարհ
4) պարզագույն, ամենաթշվառ, նսեմագույն

**12** Ո՞ր շարքի բոլոր բայերն են ածանցավոր:

1) գրվել, մեղմանալ, կապտել
2) թռչկոտել, փախցնել, սերտանալ
3) իմանալ, հարցնել, հալչել
4) տեսնել, թափթփել, սառեցնել

**13** Ո՞ր նախադասության մեջ կապ խոսքի մաս *չկա:*

1) Փոքրիկ սանդուղքը տեսնելուն պես նրա միտքն ընկավ մի դեպք, որ պատահել էր հեռու անցյալում:
2) Սպիտակ ամպերը սարերից սողացել էին դեպի քաղաք և դանդաղ ու մունջ պտույտ էին անում փողոցներով:
3) Մի աղջիկ ներսում մաքուր ձայնով երգում էր բամբակի դաշտերի և հասած արտերի երգը:
4) Նա շատ անգամ է նստում մինչև կեսգիշեր այն սենյակում, որի պատուհանից երևում է քաղաքի մեծ մասը:

**14** Ո՞ր նախադասության բոլոր ստորոգյալներն են արտահայտված սահմանական եղանակի ժամանակաձևերով:

1) Պառավը այդ ծիրանի կորիզներն էր հավաքել, պահել, որ եկող տարի տնկի տան առաջ:
2) Սիմոնը արդեն իջնում էր ձորակը, որպեսզի միանա ուրիշ ձիավորների:
3) Ես վախենում էի, որ ինչ-որ մեկը ինձանից առաջ կգնի այդ գիրքը:
4) Ես տեսել եմ, թե ինչպես է խելագար ամբոխը հարձակվում՝ ճամփին ջարդելով ամեն ինչ:

**15** Ո՞ր նախադասության մեջ պարագայական բացահայտիչ կա:

1) Առավոտյան եկավ իմ զարմիկ Մուրադը՝ ձիու վրա նստած:
2) Դա մեր ձին էր՝ կապտավուն մորթով՝ վրան սպիտակ նշաններ:
3) Նրան թվաց՝ տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը:
4) Հեռվում՝ թմբերի վրա,  ուրվագծվում էին երկու հողմաղացներ:

**16** Ո՞ր նախադասության մեջ վերաբերության անուղղակի խնդիր կա:

1) Եթե սեղանը խոսել իմանար, կխոսեր իր կոտրած ոտքից և մլակներից, որոնք ձմեռը քնում էին նրա ճաքճքած տախտակների արանքում:
2) Լուսաբացին առաջին մեքենայի աղմուկից սկսվել էր քաղաքի ժխորը, կեսօրին՝ թուլացել, երեկոյան դեմ լռել էին մեքենաները:
3) Աղջիկը, որ անապաստան երեխաների օգտին կազմակերպված վիճակախաղի կազմակերպիչներից էր, օտարականին մոտեցրեց սեղանին:
4) Նույնիսկ ձիերը կախել էին ականջները. նրանք մրսում էին խոնավությունից, բայց անշարժ լսում էին երգը:

**17** Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:

1) Քաղաքից դուրս արդեն հաստատ քայլերով մետր առ մետր քաղաքին և նրա փողոցներին էին մոտենում պողպատյա գծերը:
2) Արդեն արևը բավական ճանապարհ է կտրել և գնում է դեպի այն սառն ամպը, որ մոլորվել է վերևի կապույտում:
3) Մթնշաղին Արարատի ստորոտը, որտեղ ձյուն չկա, կորչում է մութի մեջ, և երևում է միայն ձյունոտ գագաթը:
4) Այդ վտիտ մարդը իջնում էր փողոց և հիացած փողոցի խաղաղությամբ, ջրերի ձայնով ու ծառերի սոսափով՝ քայլում էր դանդաղ և չէր տեսնում անցնողներին:



*Սևագրություն*

**32** Ո՞ր հեղինակի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

*Պարզ, լուսածածան, հրաշալի՜ գիշեր,*
*Հոսե՛ սրտիս մեջ դյութանքիդ ալիք.*
*Ճերմակ երազիդ ցայտքերեն մեղրիկ*
*Պուտ-պուտ կաթեցո՛ւր հոգվույս սիրաջեր:*

1. Հեղինակը՝ ---------------------------------------------

2. Վերնագիրը՝----------------------------------------------

**33** Արտագրե՛ք տրված նախադասությունը՝ նշանակելով կետադրությունը:

*Նրանք գալիս էին բարձրավանդակի տափարակից որի մեջտեղը աղամանդի նման ջինջ լիճն էր եղեգների երիզով քարոտ ափին հին գյուղը:*

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

**34** Գրե՛ք Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթը» պոեմի Դավթի և Մելիքի մենամարտը նկարագրող հատվածի համառոտ բովանդակությունը:

*Սևագրություն*

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________



**18** Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ *չկա:*

1) Եթե օգտվում ես այդ դեղով, ապա պիտի իմանաս նաև դրա բացասական ազդեցությունների մասին:
2) Շնորհակալություն եմ հայտնում, որ ինձ ընդգրկեցիք այդ նախագծին:
3) Նա չի խուսափում առաջինը ելույթ ունենալու, քանի որ շատ լավ է պատրաստված:
4) Օդի բարձր ջերմաստիճանը պայմանավորված է մթնոլորտի տաք հոսանքների տեղաշարժով:

**19** Տրված է բարդ նախադասություն:

*Նստել էր պատշգամբում, նայում էր բակին, ուր հավերն էին քուջուջ անում, բակում բուսած խնձորենուն, որ պտուղների ծանրությունից ճյուղերն էր կքել:*

Ո՞րն է դրա ճիշտ գծապատկերը:




**20** Տրված է բարդ ստորադասական նախադասություն:

*Ուղևորները վագոնների պատուհաններին են սեղմել իրենց ճակատները՝ սպասելով, թե երբ կերևան կայարանի շենքերը:*

Ո՞ր տարբերակում է այն ճիշտ փոխակերպված պարզի:

1) Ուղևորները վագոնների պատուհաններին են սեղմել իրենց ճակատները՝ սպասելով կայարանի շենքերի երևալուն:
2) Ուղևորները, վագոնների պատուհաններին սեղմած իրենց ճակատները, սպասում են, թե երբ կերևան կայարանի շենքերը:
3) Ուղևորները վագոնների պատուհաններին են սեղմել իրենց ճակատները և սպասում են կայարանի շենքերի երևալուն:
4) Ուղևորները վագոնների պատուհաններին են սեղմել իրենց ճակատները՝ սպասելով կայարանի շենքերի երևալու պահին:

**21** Ո՞ր նախադասության մեջ հեռացած հատկացուցիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

1) Ուղղաձիգ ժայռերի լանջով գնում է կրաքարի փայլով շողշողացող սպիտակ արահետը:
2) Ես զգցում եմ ուղևորության իմ տետրը նրա մեջ սուսամբարի երկու տերև գորշ ու չոր:
3) Ես տեսնում եմ բրուտի խոնավությունից փտած շապիկը և կավի նման մաշկը:
4) Անդոն ծաղկատար երեսով իմ ընկերը նայում է ինձ ձեռքով նշան անում դեպի ներքև:

**22** Տրված է շարադրանք:

*Եվրոպայում կարտոֆիլը հայտնվել է Հարավային Ամերիկայի հայտնագործումից հետո միայն: Կողոպտած ոսկու և այլ գանձերի հետ եվրոպացիներն այնտեղից առագաստանավերով բերեցին մինչ այդ իրենց անհայտ բույսի պալարներ: Երկար ժամանակ այն համարում էին բացառիկ ու նրբաճաշակ մի ուտելիք և մատուցում միայն հարուստ ընտանիքներում: Կարտոֆիլը Ռուսաստան բերվեց Պետրոս Առաջինի օրոք: Այդ ժամանակ կարտոֆիլի պալարները դառնահամ էին ու փոքր: Խիտ տնկելու պատճառով դրանք ավելի փոքր էին ստացվում: Երկար ժամանակ գյուղացիները հրաժարվում էին այդ «սատանայի խնձորը» մշակելուց: Տեղի ունեցան անգամ հուզումներ, որովհետև գյուղացիներին ուժով ստիպում էին կարտոֆիլ մշակել: Զինվորական ջոկատները ճնշում էին «կարտոֆիլային խռովությունները»: Սակայն հացահատիկի ցածր բերքը հարկադրեց ուշադրություն դարձնել այդ քմահաճ ու անբերքատու բույսին: Այժմ կարտոֆիլը ամենատարածված մշակովի բույսերից է:*

Տրված պնդումներից ո՞րն է բխում շարադրանքի բովանդակությունից:

1) Գյուղացիները ապստամբում էին բռնի ուժով իրենց կարտոֆիլ տնկել հարկադրելու դեմ. այդ երևույթը պատմության մեջ մտել է «կարտոֆիլային խռովություններ» անունով:
2) Ռուսաստանում կարտոֆիլի մշակումը հանգեցրեց հացահատիկի ցածր բերքատվության:
3) Կարտոֆիլը, որ թարգմանաբար նշանակում է *«սատանայի խնձոր»*, լավ բերք չէր տալիս սխալ ձևով տնկելու պատճառով:
4) Կարտոֆիլի պալարները Ռուսաստան են բերվել Հարավային Ամերիկայից՝ առագաստանավերով:

**23** Ավետիք Իսահակյանը «Սաադիի վերջին գարունը» ստեղծագործության մեջ թվարկում է, թե ինչեր է տեսել Սաադին իր կյանքի ընթացքում: Տրվածներից ո՞րը ստեղծագործության մեջ ***չկա:***

1) Մեքքայի դարպասների առաջ ծունկի եկող երկյուղած ուխտավորների անծայր քարավանները
2) Հնդու խաղաղության գետերը՝ սրբազան լոտոսներով օծուն
3) Թադմորի ապարանքը՝ յոթն հարյուր մարմարե սյուների վրա սլացող երկնասույզ աշտարակով
4) Թուրանի մրրկաշունչ տափաստանները և մրրիկների մեջ խոյացող ամեհի հելուզակներին՝ կայծակե թրերով

**24** Համո Սահյանը իր «Մասրենին» բանաստեղծության առիթով գրել է. «Մասրենին իմ երկրի կերպարն է»: Հեղինակը իր ասածը հիմնավորում է մասրենու այն հատկությամբ, որ՝

1) Մասրենու պտուղները բուժիչ հատկություն ունեն:
2) Մասրենին բոլոր թփերի մեջ ամենապտղատուն է:
3) Մասրենին երկարակյաց է ու ցրտադիմացկուն:
4) Մասրենին խոր ու պիրկ արմատներ ունի:

**25** Ո՞րն է Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի հետևյալ երկխոսության ճիշտ շարունակությունը՝

*-Պարոնը բժի՞շկ է,- հարցրեց հիվանդը, երբ տեսավ ինձ:*
*-Բժիշկ չէ,- պատասխանեց սինյորա Ստեֆանիան, բայց երևի ցավդ բժշկից լավ կհասկանա.* ……………........

1) լավ հոգեբան է:
2) ինքն էլ է հիվանդ նույն հիվանդությամբ:
3) քո հայրենակիցներից է:
4) քեզ նման միայնակ է:



**26** Կազմե՛ք ***մոտեցնել*** բայի եզակի հրամայականը:

Պատասխան՝ -----------------------------------------------------

**27** Գտե՛ք և դո՛ւրս գրեք տրված նախադասության պարզ ստորոգյալը:

*Ես ծեր եմ, և անկարող եմ նման սխրագործության, իսկ դու երիտասարդ ես. ճանապա՛րհ ընկիր՝ անելու այդ սխրագործությունը:*

Պատասխան՝ -----------------------------------------------------

**28** Որոշե՛ք ստորադաս նախադասության բնույթը (շարահյուսական պաշտոնը) տրված բարդ նախադասության մեջ:

*Հեռվից երևաց, որ գետը, գարնան հալոցքի ջրերից վարարած, խեղդվելով հոսում է:*

Պատասխան՝ -----------------------------------------------------

**29** Նախադասությունները դասավորե՛ք տրամաբանական ճիշտ հաջորդականությամբ: Որպես պատասխան գրե՛ք միայն նախադասությունների համարները:

1. Հեռվից ավերակներ չեն երևում, և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, գոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին:
2. Ոչ մի դուռ և ոչ մի պահակ աշտարակի գլխին:
3. Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները:
4. Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը:

Պատասխան՝ -----------------------------------------------------

**30** Ո՞ւմ մասին է Պարույր Սևակը գրել.

*«Նրա ծննդից անցել է հազար և ավելի տարի: Այդ ընթացքում նրան երկնած ժողովուրդը ծնել է ամենաքիչը քսան մեծ բանաստեղծ, բայց առ այսօր վերստին նույն ինքն է բոլոր այդ մեծերի մեջ մեծագույնը»:*

Պատասխան՝ -----------------------------------------------------

**31** Ո՞ր ստեղծագործությունն է սկսվում *«Մի կորած մարդու հիշատակարանից»* ենթախորագրով:

Պատասխան՝ -----------------------------------------------------